ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **06/05/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/4
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 22 անդամներ:

Բացակա էին՝ Վլադիմիր Առաքելյանը, Էմիլ Հարությունյանը, Նազիկ Հարությունյանը, Սեթրակ Սեթրակյանը, Պավել Ցուգունյանը (ովքեր իրենց բացակայության պատճառի մասին չէին տեղեկացրել):

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Դիաննա Երեմյանը, Աշոտ Ֆելիկյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Արուսյակ Առաքելյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 06-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 06-ի երկրորդ նստաշրջանի արտահերթ չորրորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտային հարակից օղակաձև այգին «Հերոսների պուրակ» անվանակոչելու մասին.
2) Աբովյան քաղաքի 5-րդ և 6-րդ միկրոշրջաններին հարող փողոցը «Արցախի

փողոց» անվանակոչելու մասին.
3) Աբովյան քաղաքի 6-րդ միկրոշրջանը «Շուշի թաղամաս» անվանափոխելու մասին.
4) Աբովյան քաղաքի 5-րդ միկրոշրջանը «Հադրութ թաղամաս» անվանափոխելու մասին.
5) Աբովյան համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին.
6) Աբովյան համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին.
7) Աբովյան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա/

Ավագանու անդամներ Մելինե Գասպարյանը, Տիգրան Գեղամյանը, Նաիրա Մելիքյանը, Նաիրի Հակոբյանը, Նորայր Միքայելյանը, Մարգարիտա Հարությունյանը և Գուրգեն Օսիպյանը դահլիճ մտան օրակարգն հաստատվելուց հետո:

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՕՂԱԿԱՁԵՎ ԱՅԳԻՆ «ՀԵՐՈՍՆԵՐԻ ՊՈՒՐԱԿ» ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի և 6-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, հաշվի առնելով Աբովյան համայնքի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության առաջարկը՝ Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***
1. Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտային հարակից օղակաձև այգին անվանակոչել «Հերոսների պուրակ» (հատակագիծը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քննարկում տեղի ունեցավ նախագծի վերաբերյալ հրավիրված հանրային լսման արձանագրությունը որոշման նախագծին կցելու և տրամադրելու վերաբերյալ:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 5-ՐԴ ԵՎ 6-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ ՓՈՂՈՑԸ «ԱՐՑԱԽԻ ՓՈՂՈՑ» ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇՈՏ ՖԵԼԻԿՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի և 6-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Աբովյան քաղաքի 5-րդ և 6-րդ միկրոշրջաններին հարող փողոցը անվանակոչել «Արցախի փողոց» (հատակագիծը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարց հնչեց, թե ինչու՞ անվանակոչել հենց 5-րդ և 6-րդ միկրոշրջանները, քանի որ ունենք օտարածին անվանումներով կենտրոնական փողոցներ:

Պատասխանվեց, որ քննարկվել է նաև այդ փողոցների անվանափոխման հարցը:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 6-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԸ «ՇՈՒՇԻ ԹԱՂԱՄԱՍ» ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇՈՏ ՖԵԼԻԿՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Աբովյան քաղաքի 6-րդ միկրոշրջանը անվանափոխել «Շուշի թաղամաս» (հատակագիծը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քննարկում տեղի ունեցավ տվյալ թաղամասի բնակիչների կարծիքը հաշվի առնելու վերաբերյալ:

Կողմ-15 Դեմ-7 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 5-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԸ «ՀԱԴՐՈՒԹ ԹԱՂԱՄԱՍ» ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇՈՏ ՖԵԼԻԿՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Աբովյան քաղաքի 5-րդ միկրոշրջանը անվանափոխել «Հադրութ թաղամաս» (հատակագիծը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարց հնչեց, թե ինչու՞ անվանափոխել 5-րդ և 6-րդ միկրոշրջանները, եթե Աբովյան քաղաքն ունի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ միկրոշրջաններ: Պատասխանվեց, որ Արցախի փողոցին հարակից իրար հաջորդող են 5-րդ և 6-րդ միկրոշրջանները, որոնք անվանանափոխվում են համապատասխանաբար Հադրութ և Շուշի:

Կողմ-14 Դեմ-7 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38-Ա/

Ավագանու անդամ Գևորգ Պողոսյանը լքեց նիստերի դահլիճը:

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 183-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետով, Աբովյան համայնքի ավագանին

ո ր ո շ ում է.

1. Հաստատել «Աբովյան համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ում է.***

1. Հաստատել «Աբովյան համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քննարկում տեղի ունեցավ Աբովյան համայնքում ցուցատախտակների քանակի վերաբերյալ:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 84-րդ հոդվածի 1-ին մասով՝ Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ում է՝***

1. Հաստատել «Աբովյան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ա/

Ավագանու անդամներ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱՉՄԻԿ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՕՍԻՊՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____